ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՌԱՏՐԻ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Sargis Gevorgyan 29.04.2024 14:19:36	Աջակցում եմ տվյալ նախագծի հաստատմանը, այո պոլիէթիլենային տոպրակներից ձերբազատվելն արդեն իսկ օրհասական խնդրի առարկա է:	Ընդունվել է	Մեկանգամյա պլաստիկ արտադրանքի գործածության կրճատումը շարունակական գործընթաց է:
2	Տիգրան Պետրոսյան 13.04.2024 16:23:30	Վրաստանի օրինակով ուզում եք փող հավաքել մարդկանցից, բայց դա նոռմալ չի: Վրաստանում ուրիշ ոլորտնա սրա պես արած:	Չի ընդունվել	Առաջարկվող կարգավորումն ուղղված է մեկանգամյա պլաստիկ

		Մի ստիպեք ավել փող դուրս տա տնտեսվարողը, որ ապրանքի գինել ավտոմատ թանգացնի: Իրական վճարողը վերջում էլի սպառողնա լինելու, ոչ մեկ իրա գրպանից փող չի տա ուղղակի:		արտադրանքի թիրախային խմբի գործածության արգելքին, այլ ոչ թե գնի բարձրացմանը, հետևաբար ֆինանսական մուտքերի ավելացման նպատակ չի հետապնդում:
3	Ստյոպա Հակոբյան 01.04.2024 19:23:47	ՆՄան նախագիծ բերելով ծանր հարվածի տակ է դրվում այդ ոլորտի տնտեսվարողների հետագա գործունեությունը, ուստի այդ պայմաններում առնվազն պետք է 2-3 տարի ժամնակահատվածում աստիճանաբար արգելել այդ գործունեությունը, իսկ այս դեպքում այն ունի 3 ամիս ժամկետ, ընդ որում 4 տարի առաջ պահանջներ է ներկայացվել արտադրությանը մասնավորապես 50 մկմ և ավել արտադրատեսակներ վաճառքին, որևէ խոսք չի եղել հետագայում այն առհասարակ արգելելու մասին, ուստի 3 ամիս անց եթե օրենքը ընդունվի, այն չի կարող ողջամիտ ժամանակահատված դիտվել, դա պետք է կատարվի աստիճանաբար այլ ոչ թե կտրուկ, քանի որ 3 ամսում նույնիսկ հնարավոր չէ վաճառել առկա ապրանքային մնացորդները,	Սկսած 2019 թվականից պարբերաբար իրազեկման միջոցառումներ են իրականացվել մեկանգամյան պլաստիկ արտադրանքի աստիճանական կրճատման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ: «Առևտրի և ծառայությունների մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի մշակումն ամրագրված է Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշման 1-ին հավելվածի «Շրջակա միջավայրի նախարարություն» բաժնի 12-րդ կետով:	Չի ընդունվել

			Մեկանգամյան պլաստիկ արտադրանքի թիրախային խմբի գործածության խթանման նպատակով մշակված նախագծերի փաթեթը մշակվել և իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվել է դեռևս 2023 թվականի մարտ ամսին (հղումը՝ https://www.e-draft.am/projects/5445):	
4	Ստյոպա Հակոբյան 01.04.2024 09:45:42	Որևէ պատշաճ հիմնավորում չկա այս նախագիծը ընդունելու համար, առաջարկում եմ այն չեղարկել:	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Շուկայի վերահսկողության մասին օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթին կից ներկայացված է այդ նախագծերի ընդունման հիմնավորումը:	Չի ընդունվել
5	Ստյոպա Հակոբյան 01.04.2024 09:45:02	Առաջարկվում է այդ նախագծին կից բերել մեկ այլ նախագիծ, որով կմարվեն այդ ոլորտի 2020 թվականից հետո հիմնադրված	Մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանքի գործածության ծավալների	Չի ընդունվել

		տնտեսվարողների սարքավորումների ձեռք բերման և վարկային միջոցների ներգրավման համար բանկերից ստացված ֆինանսական միջոցները, քանի որ պետությունը մի դեպքում 2020 թվականից սկսած աջակցել է այդ ոլորտին որպեսզի ոլորտը ձարգանա, իսկ այս նախագծի ընդունմամբ ոլորտը մինգամից կդադարի գոյություն ունենալ, ընդ որում պոլիէթիլենային տոպրակների արտադրությունը չի նույնանում մեկանգամյա օգտագործման սպասքի արտադրության հետ, անհրաժեշտ է որ հավասար շուրջ 2 տարի ժամկետ տրամադրվի նաև տոպրակներ արտադրող տնտեսվարողներին, որպեսզի նրանք կարողանան այդ ժամանակահատվածում մարեն իրենց վարկային պարտավորությունները կամ հակառակը կտրուկ քայլերի դեպքում պետությունը պետք է վերցնի իր վրա նրանց ֆինանսական բեռը:	կրճատմանն ուղղված գործընթացը Հայաստանի Հանրապետությունում մեկնարկել է 4 տարի առաջ: Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել և Ազգային ժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 17-ին ընդունվել է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-226-Ն օրենքը, որն ուժի մեջ է մտել 2022 թվականի հունվարի 1-ից: Արդյունքում՝ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով արգելվում է առևտրի օբյեկտներում, առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերի միջոցով, շրջածախ առևտրի միջոցով, ինչպես նաև բացօթյա առևտրի իրականացման դեպքում մանրածախ առևտուր իրականացնելիս մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ կշռափաթեթավորման համար օգտագործվող պարկերի և	

			երկրորդային հումքից արտադրված պարկերի և տոպրակների) վաճառքը: Մեկանգամյան օգտագործման պլաստիկ արտադրանքի թիրախային խմբի առկայության կամ օտարման արգելքի ուժի մեջ մտնելը նախատեսվում է իրականացնել փուլային տարբերակով՝ դրանց արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանառության և հասույթի կտրուկ նվազումը կանխարգելելու, ինչպես նաև արտադրությունները վերապրոֆիլավորելու և արդիականացնելու նպատակով աշխատանքների իրականացման հնարավորինս արդյունավետ կազմակերպմանը չխոչընդոտելու նպատակով: Պոլիէթիլենային պարկերի ու տոպրակների (բացառությամբ՝ կշռափաթեթավորման համար օգտագործվող պարկերի և ոչ պարենային ապրանքների ու աղբի համար նախատեսված՝ երկրորդային հումքից	

			արտադրված պարկերի ու տոպրակների)՝ անկախ թաղանթի հաստությունից, առկայության կամ օտարման արգելք սահմանող դրույթը նախատեսվում է կիրարկել 2024 թվականի հուլիսի 1-ից, պլաստիկից կամ փրփրապլաստից պատրաստված մեկանգամյա օգտագործման սպասքի (ափսեներ, բաժակներ, գդալներ, պատառաքաղներ, դանակներ, ըմպելու կամ խառնելու համար նախատեսված ձողիկներ) առկայության կամ օտարման արգելք սահմանող դրույթը՝ 2025 թվականի կունվարի 1-ից, պլաստիկից կամ փրփրապլաստից պատրաստված մեկանգամյա օգտագործման տարաների (բացառությամբ կշռափաթեթավորման համար օգտագործվողների) առկայության կամ օտարման արգելք սահմանող դրույթը՝ 2026 թվականի հունվարի 1-ից:	